



17. ԽՈՍՔ ԾԱԽՈՂ

Մի թաքավորի տղա շատ փշատատամ է լինում. ինչ գործի տալիս է մերր, չի մնում. ձեռն ընկած փողը մխսում է: Վերջիվերջո այս տղեն մտքումը գնում է ուղղվել, մի գործի կանգնել. հորից փող է վերցնում սորա համար:

Փողոցով անցնելիս, տեսնում է, որ մի մարդ ձեն է տալիս. «Ա՛յ սող ալան՝, ա՛յ սող ալան»: Նա հետաքրքրվում է, տեսնի, թե ինչ է ծախում: Նա մոտեցավ, հարցրեց գինը:

Նա ասաց.— Խոսքի մինը տասը մանեթ է:

Սա տասը մանեթ տվեց ու նա ասաց.— Եթե գնաս առուտուր անելու, պատահի գիշերը մի տեղ վեր գաս, դու բաց տեղ չվեր գաս, գնա սարի գլխին վեր արի:

Նա ասաց.— Լա՛վ:— Տասը մանեթ տվեց ու էլի առաջ գնաց:

Մի ուրիշ տեղ տեսավ, որ միկենույն մարդը ձեն է տալի. «Ա՛յ սող ալան»: Նա էլի մոտենում է ու տասը մանեթ էլ է տալիս, որ տեսնի, թե էս անգամ ինչ կասի:

Նա այս անգամ ասում է.— Եթե մի տեղ տեսնես մարդիկ խոսում են, կամ մի աշուղ հաղ է ասում, դու գնա լսի, նրանից բան սովորի:

1 Ա՛յ խոսք առնող (Ս. Բ.):

Նա այս էլ իմանալով գնում է տուն:

Սրա հերը մի Ոսկե ձուկ ունեւր՝ մի պստիկ ավագանի մեջ: Մի անգամ նրա հետ հաղ էր անում, բռնելով իր ձեռների մեջ: Հանկարծ ձուկը լեզու առավ ու սկսեց խոսելը. «Ես ձկների թաքավորի տղան եմ. ինձ տար գցի ջուրը, թող դառնամ ազատ, իսկ ես սորա փոխարեն քեզ շատ լավութիւն կանեմ. երբ ծովի վրայով անցկենաս, ինձ ձեն տուր, ես ծովի տակից քեզ համար ինչքան ակն ու մարգարիտ ուզենաս՝ կհանեմ, քեզ կտամ»:

Թաքավորի տղեն խղճաց ձկան վրա ու տարավ ջրի մեջ բաց թողեց. ձուկը ուրախ-ուրախ լող տալով գնաց:

Թաքավորի տղեն հորից ճանապարհի համար փող վերցնելով, թողեց իրանց երկիրը ու գնաց օտարութիւն: Մի քաղաք հասավ, փողոցում ման էր գալիս, անցնում խանութների առջևից: Մի հարուստ վաճառական նկատեց սորան, իմացավ, որ սա դարիր է. կանչեց իր մոտ, հարց ու փորձ արեց ու խղճալով, որ եկել է այս տեղերը մի գործ գտնելու, իրա մոտ վերցրեց, իբրև որդեգիր: Նա սորան շատ հավատարմությամբ էր ծառայում:

Մի անգամ ուղարկեց սորան այս հարուստ վաճառականը ուրիշների հետ մի այլ քաղաք՝ առուտուր անելու: Նորա ընկերները այն քաղաքը հասնելով՝ ամեն մինը սկսեց իր համար ապրանք առնել, իսկ նա դնաց ծովի ափը ու ձեն տվեց էն ձկանը: Նա դուրս եկավ ու հրամայեց ծովի բոլոր ձկներին, որ ծովի տակ ինչքան ոսկիներ, ակներ կա, դուրս ածեն: Ձկները իրանց թաքավորի տղի հրամանը կատարեցին ու դուրս ածեցին: Նա իր ջվալները լիքը լցրեց ու շնորհակալութիւն ասելով՝ հեռացավ:

Ձկների թաքավորի տղեն ասեց.— Ինչ ժամանակ ուղի՝ թող էլի գա, տանի:

Սա գնաց իր ընկերների մոտ, նրանք իրանց առուտուրը արեցին, պրծան, իսկ սա ոչինչ չառավ, գնաց մի ջվալ փթիր առավ ու բերելով ածեց ոսկով լիքը ջվալների գլխին, որ շերևա: Նրանք ծիծաղում էին սրա վրա ու իրար մեջ փսփսում:

Մեր վաճառականները ճանապարհ ընկան իրանց քաղաքը՝ առուտուրը վերջացնելուց հետո: Դեռ իրանց տեղները չհասած, մարդիկ գնացին առաջուց իմաց տալու, որ Ֆլան վաճառականները հետ են գալիս, իսկ էն վաճառականի որդեգիրը իսկի բան չի առել, Փողերը փչացրել է, մի քանի ջվալ փթիր է առել: Այս ասեցին սորա խազեյնին:

Նա ասաց.— Բան չկա, տղա է, հալրաթ ուրիշ բան չի գտել՝ չի առնե. ուրիշ անգամ էլ գնա, փոխանակ փթրի, մի ավելի լավ զատ կառնի:

Մեր փթիր առնողը եկավ վեր իջավ իրա խաղեյնի մոտ. ջվալները վեր բերեց ու խնդրեց որ տանեն մի օթախի մեջ առանձին փակեն:

Խաղեյինը ասեց.— Փթիրը ով պիտի առնի, թեկուզ դուրսը թող մնա:— Բայց նա խնդրեց անպատճառ առանձին սենյակի մեջ փակեն. և երբ ջվալները գետնի վրա ածեց տղան, վաճառականը մնաց չարմացած ու իր որդեգրի ճակատը պաշեց, Անցավ մի քանի ժամանակ. այս բանի մասին ոչ ոքի չասեցին:

Մի անգամ էլ պատահեց, որ սա գնաց ուրիշ վաճառականներին հետ ուրիշ քաղաք՝ խրիզ անելու. հրիզը վերջացնելուց հետո վերադառնում են իրենց քաղաքը: Ճանապարհին մի տեղ մթնեց: Գիշերը սրանք մի բաց տեղ մնացին, իրենց շագիթները տվին. բայց սա գնաց սարի գլխին իր շագիթը տվեց, հիշելով էն հոսք ծախողի ասածը: Գիշերը մի սաստիկ սելավ էլավ ու ներքևում շագիթ տվող վաճառականների ապրանքները՝ չորիններով քշեց, տարավ: Իրանք հազիվ հազ պրծան մահից ու պրծացրին գուլպաները: Իսկ սարի գլխին շագիթ տվողին ոչ մի վնաս չդիպավ. առավոտը իրա չորիքը բարձած վեր եկավ սարից ու շարունակեց նրանց հետ ճանապարհը դեպի իրանց քաղաքը: Սաղ քաղաքում չավ էլավ, թե Ֆլան վաճառականների ապրանքը չուրը տարել է, իսկ Ֆլան մարզը իր ապրանքներով պրծել: Իսկ սորա խաղեյինը, էլ ասել չի ուզի, որ սրան շատ սիրեց ու գովեց, ոնց որ որդի էսպես ընդունեց սորանից հետո: Բայց մի դեպք պակասեցրեց այդ սերը: Այդ վաճառականի կնոջ աչքը վաղուց ընկել էր այս երիտասարդի վրա: Բայց ոչ մի կերպով չէր հարմարվում նրա հետ խոսել: Մի անգամ սրա խաղեյինը ուղարկեց սրան իրանց տունը իմաց տալու, որ հացը շուտ պատրաստի ու ինչ որ բան պետք էր՝ գնեք: Նա ներս մտավ, ասեց իր խաղեյնի հրամանը, ուզում էր դուրս գալ, սա դուռը առաջը փակեց ու ստիպում էր նրան անառակ գործ բռնելու. նա սրան ապտակ խփեց ու փախավ սրա ձեռից՝ ասելով, որ իր մոր տեղ է, ինչպե՞ս կարելի է այդ: Նա իր խաղեյնին ոչինչ չասեց: Իսկ կինը այնպես իմացավ, թե կասի ու

այդ պատճառով, Լրբ իրան մարդը եկավ, ամենից առաջ նա դանդաղաց նրա պրիկաշչիկից, իբր թե վատ բան առաջարկեց:

Այս վաճառականը ունեւր դարձյալ մի եղբայր, որը ուրիշ քաղաքում սասուն հփող էր. մի փոքրիկ որդի էլ ունեւր, որ կարդում էր ուսումնարանում: Սա մտքում դրեց վրեժխնդիր լինել իր արիկաշչիկից ու ուղարկել իր եղբոր մոտ, որ նա այնտեղ կորցնի նրան:

Վաճառականը իր եղբոր վրա մի նամակ գրեց հետեւյալ բովանդակությամբ. «Այս նամակ բերողին իսկույն գցիր քո սապնի թեշտի մեջ ու ելիր. առանց հարցնելու անպատճառ կատարիր հրամանը»: Այս նամակը նա տվեց իր պրիկաշչիկին ու ասեց, որ գնա իր եղբոր մոտ ու պատասխանը բերի: Նա վեր կալավ ու գնաց: Ինչպիսի ճանապարհին տեսավ, որ մի աշուղ կանգնած, իր շուրջը մարդիկ ժողոված, հաղ է ասում: Նա հիշեց էն խոսք ծախողի ասածը ու գնաց լսելու. վերեկից եկավ իր խագեւիինի որդին ուսումնարանից, խուրջինը կոնատակին, նա հարցրեց, թե ինչու է կանգնել. սա ասաց, որ լսում է աշուղին և թե՛ գիր ունի տանելու նրա հորեղբորը: Երեխան ասեց, թե՛ ես կտանեմ,— ու իր խուրջինը տալով նրան, ինքը վազեվազ գնաց քաղաքը գիրը տվեց իր հորեղբորը: Նա կարդաց ու մնաց զարմացած, թե ինչու է ուղում սպանել տալ իր հարազատ որդուն: Բայց որովհետև նա իր մեծ եղբայրն էր, այդ պատճառով էլ նա պիտի կատարեր հրամանը:

Իսկույն բռնեց նրան ու գցեց սաստիկ տաք թեշտի մեջ, նա հալվեց ու սապոն դառավ: Վաճառականի պրիկաշչիկը հետ եկավ տուն, ասելով, թե նամակը տարավ: Նա զարմացավ, թե ինչպես տարավ, որ կենդանի հետ է դառել. նա պատմեց, որ տղին ճանապարհին պատահեց ու նա առնելով ձեռից գիրը, տարել է: Շատ վաղ տվեց իր գլխին, բայց արդեն ուշ էր: Նրան կանչեց ու առանձին պատմեց բոլորը, թե այն գրի մեջ դրված էր, որ իրան սպանի, բայց իր որդու հետ է պատահել: Նույնպես սորա պատճառը պատմեց: Այն ժամանակ երիտասարդը մանրամասն ասեց ճշմարտությունը, թե բանը ինչպես է եղել և այն, թե ինքը այնքան արդար է այդ մեղադրանքի մեջ, որ աստված այդ պատիժը իր որդու վրա բերեց:

Վաճառականը հավատալով նրա խոսքին, իսկույն սպանեց իր կնոջը, իր համար ուրիշ կին բերեց, սրան ևս բնորոնելով որպես հարազատ որդի: Այսպես, ճշմարտությունը երբեք չի ծածկվում: